

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Ա. ԹԱԽՏԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ

***PHILADELPHUS L.* ՅԵՂԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ՈՒ
ԿԼԻՄԱՅԱՎԱՐԺԵՑՈՒՄԸ ՀՀ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ԵՎ
ԴԵՆԴՐՈՊԱՐԿԵՐՈՒՄ**

**Գ.00.05 - «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ
կեսարանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2026

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ БОТАНИКИ ИМЕНИ А. ТАХТАДЖЯНА
ГРИГОРЯН АННА АРТАВАЗДОВНА**

**ИНТРОДУКЦИЯ И АККЛИМАТИЗАЦИЯ ПРЕДСТАВИТЕЛЕЙ РОДА
PHILADELPHUS L. В БОТАНИЧЕСКИХ САДАХ И ДЕНДРОПАРКАХ РА
АВТОРЕФЕРАТ**

**Диссертации на соискание ученой степени кандидата биологических наук по
специальности**

03.00.05- “Ботаника, микология, экология”

ЕРЕВАН - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Կենսաբանական գիտությունների դոկտոր՝

Ի. Գ. Գաբրիելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Կենսաբանական գիտությունների դոկտոր՝

Ժ.Ա. Հակոբյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու՝

Արծ.Ա. Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026թ. հունիսի 4-ին ժամը, 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի “Բուսաբանություն” 035 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0063, ք. Երևան, Աճառյան 1, ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ, E-mail: science@botanv.am

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գրադարանում և www.botanv.sci.am կայքում:

Ստղմագիրն առաքված է 2026թ. մայիսի 2-ին:

035 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Կենսաբանական գիտությունների թեկնածու՝



Տ.Տ. Տարսյանի

Тема диссертации утверждена в Институте ботаники им. А. Тахтаджяна НАН РА

Научный руководитель:

Доктор биологических наук

И.Г. Габриелян

Официальные оппоненты:

Доктор биологических наук

Ж.А. Акопян

Кандидат биологических наук

Արշ. Ա. Գրիգորյան

Ведущая организация: Ванadzorskiy gosudarstvenniy universitet im. O. Tumaniana

Защита диссертации состоится 4-го июня 2026г., в 14.00 часов на заседании

Специализированного совета 035 по ботанике ВАК РА действующего при Институте ботаники им. А. Тахтаджяна НАН РА


Адрес: 0063, Ереван, ул. Ачарян 1, Институт ботаники им. А. Тахтаджяна НАН РА E-mail: science@botanv.am

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института ботаники им. А. Тахтаджяна НАН РА и на сайте www.botanv.sci.am

Автореферат диссертации разослан 2-ого мая 2026г.

Ученый секретарь специализированного

Кандидат биологических наук



совета 035,

Ж.О. Овакян

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մեր օրերում բարձր գեղագարդությամբ և առատ ծաղկմամբ աչքի ընկնող թփատեսակների բազմակողմանի ուսումնասիրությունը, դրանց գիտական հավաքածուների ստեղծումը, ինչպես նաև կանաչապատման տարբեր տիպերի և կատեգորիաների տնկարկներում ներդրումն ու նպատակային օգտագործումը առանձնակի կարևորություն է ներկայացնում: Այս համատեքստում հատուկ հետաքրքրություն է առաջացնում սրնգենի (*Philadelphus* L.) ցեղը բարձր գեղագարդությամբ բնորոշող գեղագարդ թփերի խումբը, որի տեսակային բազմազանության ուսումնասիրությունը արդիական խնդիր է հանդիսանում:

Մեր կողմից ներկայացվող ստենախոսական աշխատանքն առնչվում է Երևան քաղաքի ու հանրապետության այլ բնակավայրերի կանաչապատման ոլորտում նարկայումս լուծում պահանջող այնպիսի խնդիրներին, որոնք վերաբերվում են արժեքավոր թփատեսակներով տնկարկների վերակառուցմանը, նոր բարձր գեղագարդ տեսակներով համարվելու անհրաժեշտությանը, ինչպես նաև շրջակա միջավայրի միկրոկլիմայական պայմանների բարելավմանը:

Երևան քաղաքի և նրա մերձակա կանաչ տնկարկներում բազմիցս օգտագործվել են մեծ քանակությամբ ծառայթիատեսակներ (Վարդանյան, 2020), մինչդեռ փոշեհավաք, բարձր գեղագարդ ու հասկապես գեղեցիկ ծաղկող թփերի օգտագործմանը քիչ ուշադրություն է դարձվել: Այս հանգամանքներով պայմանավորված կարևորվել է նաև սրնգենին (*Philadelphus* L.), որի հարուստ տաքսոնոմիական կազմն ու էկոլոգիական ճկունությունը, ինչպես նաև ընդգրկուն աշխարհագրական տարածվածությունը հնարավորություն են տվել դիտարկել այն որպես արժեքավոր ու հեռանկարային երանյուշ Հայաստանի բազմազան դենդրոկլիմայական պայմաններում ներմուծելու համար: Ցեղի բարձր գեղագարդ ներկայացուցիչների բացակայությունը կանաչ տնկարկների դենդրոկազմից, ստիպել է մտածել, որ դրանց բազմակողմանի ուսումնասիրությունն ու կանաչապատման պրակտիկայում լայն կիրառությունն ունի չափազանց մեծ գիտական նշանակություն և գործնական կարևորություն:

Բացի ցեղի օտարածին տեսակներից, որոնք ներմուծվել և աճեցվել էին ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում, հարկ եղավ գնահատելու նաև տեղաբնիկ կովկասյան սրնգենու՝ *Philadelphus caucasicus* Koehne-ի կամ Կեոձ հասմիկ կովկասյանի հազվագյուտության կարգավիճակը Հայաստանի ֆլորայում, որը ՀՀ կարմիր գրքում (2010թ.) գրանցված է տեսակի վերաբերյալ տվյալների անբավարարության (DD) կատեգորիայում: Վերջինս վկայում էր այն մասին, որ առկա տեղեկությունները տեսակի թվաքանակի կամ արեալի վիճակի մասին անբավարար են բնության մեջ դրա ներկայիս կարգավիճակը և նույնիսկ անհետացման ռիսկն ուղղակի կամ անուղղակի գնահատելու համար: Դրա համար պահանջվում էին ավելի շատ տեղեկություններ, քան այն, որ կովկասյան սրնգենին ՀՀ սահմաններում Յա. Ի. Մուրիջանյանի կողմից բնության մեջ հայտնաբերվել է 1953թ-ին (Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի հետբարիքումային նմուշ՝ ERE №111166), որից հետո հավաքը բազմաթիվ գիտաբանների ընթացքում այլևս չի կրկնվել: Այս հանգամանքով պայմանավորված անհրաժեշտություն առաջացավ լայնամասշտաբ դաշտային հետազոտություններ իրականացնել տաքսոնը բնության մեջ (Տավուշի մարզի հյուսիս-արևելյան անտառներում) վերագտնելու ուղղությամբ ու չնայած արդյունքներին այնուամենայնիվ դիտարկել տեսակը որպես ռեզիլտային օրինակ բուսականության մեջ, հաշվի առնելով, որ այն ոչ վաղ անցյալում գոյություն է ունեցել Հայաստանի արբորիֆլորայի ռեզիլտային օջախներից մեկում (Мулкиджанян, 1967), իսկ դրա բրածո մնացորդները հայտնաբերվել են Ուրուսանի ավազանի Միսիանի դիատոմիտային վաղ պլեյստոցենյան 1,27 մլն. տարի թվագրվող սավարաշերտում (Գաբրիելյան, 2021):

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակը *Philadelphus* L. ցեղի տեսակների, պարտիզային ձևերի արժեքավոր և գեղագարդ հատկանիշների,

Էկոլոգիական հարմարողականության գնահատումն ու ՀՀ տարբեր բնակավայրերում գեղազարդ այգեգործության մեջ օգտագործելու համար առավել հեռանկարայինների հայտնաբերումն է, ինչպես նաև տեղաբնիկ կովկասյան սրնգենու բրածո և ժամանակակից տեսակի համեմատական ու հնէաբուսաբանական ուսումնասիրումը:

Աշխատանքի նպատակային խնդիրներ են.

- Սրնգենու բուսաաշխարհագրական, տեսակային, սորտային և պարտիզային ձևերի կազմի վերլուծություն:

- ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում առկա *Philadelphus* ցեղի ներկայացուցիչների տարբերակական կազմի վերլուծություն:

- Կլիմայավարժեցման տարբեր փուլերում գտնվող սրնգենիների բազմացման առանձնահատկությունների, հարմարողականության, սեզոնային աճի և զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրում:

- Կանաչապատման մեջ նպատակային օգտագործման համար հեռանկարային տեսակների, պարտիզային ձևերի գնահատում և գործնական առաջարկների մշակում:

- Հայաստանում կովկասյան սրնգենու բրածո և ժամանակակից ներկայացուցիչների հայտնաբերում և համեմատական գնահատում:

Աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը կայանում է

նրանում, որ առաջին անգամ է իրականացվել նպատակային ուսումնասիրություն՝ գնահատելու սրնգենու համաշխարհային գենոֆոնդը որպես ներմուծման հեռանկարային և արժեքավոր ռեսուրս հանրապետության համար: Բացի ցեղի օտարածին տեսակներից, գնահատվել է նաև տեղաբնիկ կովկասյան սրնգենու կարգավիճակը ՀՀ ֆլորայում, որն իր բնական աճելավայրում (Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների անտառներում) թվաքանակի հետզհետե նվազման, արեալի կրճատման կամ գուցե արդեն իսկ անհետացման խնդրի առջև է կանգնել: Հիմնավորված կերպով ներկայացվել է տեսակի ռեզիլտային բնույթը, բարձրացվել է դրա պահպանության անհրաժեշտության հարցը:

Սրնգենու հավաքածուն պահպանելու, նոր տեսակներով համարելու, դրանց կիրառությունն ընդլայնելու նպատակով, մշակվել են վերարտադրության մեթոդները, ուսումնասիրվել են աճի և զարգացման առանձնահատկությունները, գնահատվել են գեղազարդ հատկանիշներն ու էկոլոգիական հարմարողականությունը: Ըստ կանաչապատման կատեգորիաների տրվել է դրանց նպատակային օգտագործման հեռանկարայնությունը, Հայաստանի տարբեր դենդրոկլիմայական տարածաշրջանների կանաչ շինարարության մեջ լայնորեն ներդնելու պիտանիությունը: Իսկ հնէաբուսաբանական ուսումնասիրությունների արդյունքներից ստացված տվյալները՝ կովկասյան սրնգենու բրածո նմուշի առկայությամբ պայմանավորված, մեր կողմից տեսակի ռեզիլտայնությունն սպացուցող փաստի հրապարակման հիմք են հանդիսացել:

Կիրառական նշանակությունը: Կիրառական նշանակության էությունը կայանում է

նրանում, որ հանրապետության տարբեր դենդրոկլիմայական պայմաններում փորձարկված, էկոլոգիական հարմարողականությունն ու բարձր գեղազարդությունն դրանորձ ներմուծված սրնգենու տեսակների ու պարտիզային ձևերի ուսումնասիրության գիտական արդյունքները հիմք են հանդիսանալու ժամանակակից տեսակակին ընդլայնելու և կանաչ տնկարկներում լայնամասշտաբ կիրառելու համար: Աշխատանքն ուղեցույց է դառնալու կանաչապատման բնագավառի մասնագետների համար և օգնելու է բնակավայրերի կանաչապատման տեսակաշարի ընտրության գործընթացն սովորելի հիմնավոր կազմակերպելու հարցում:

Ատենախոսության ապրոբացիան: Ատենախոսության հիմնական արդյունքները

ներկայացվել և քննարկվել են բուսաբանության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում (2024), ինչպես նաև ներմուծման և Հնէաբուսաբանության բաժինների գիտական սեմինարներում (2024, 2025):

Հրատարակումներ: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են հեղինակի 7 հոդվածներում:

Ատենախոտության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոտությունը բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, եզրակացությունից և գործնական առաջարկներից, գրականության ցանկից և 4 հավելվածներից: Աշխատանքում ներառված է 13 աղյուսակ, 3 նկար, 4 գրաֆիկական պատկեր, 2 ֆենոսպեկտր, 69 ֆոտոաղյուսակ: Տեքստը կազմված է համակարգչային 137 էջից, հավելվածը՝ 69 էջից, օգտագործված գրականության ցանկը՝ 186 անուն:

ՓԼՈՒԽ 1. ՍՐԼԳԵՆԻ (PHILADELPHUS L.) ՑԵՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՏՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՒՍԱՎԱՃԵՆԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԲՍՈՆՈՍԻԱԿԱՆ ԲԱԶՄԱԶՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սրնգենու լատիներեն անվանումը՝ «*Philadelphus*» արվել է Եգիպտական արքա Պտղոմեոս Փիլադելֆոսի պատվին, ով գրադրվում էր բնագիտական գիտություններով (*Flora of North America*, 2016): Լինենյը (*Linnaei*, 1753, 1754) որոշել և հաստատել է ցեղը 1737-1753թթ-ին, ներկայացնելով երկու տեսակ՝ *Philadelphus coronarius* և *Ph. inodorus*:

Philadelphus ցեղն ունի աշխարհագրական տարածվածության բավական ընդաձակ արեալ և հարուստ տարսնոմիական կազմ (Черепанов, 1995): Ցեղը լայնորեն տարածված է միջերկրածովյան տարածաշրջանում, ունի դիզյունկախիվ տիրույթ, որտեղ տեսակառաջացման կենտրոնները հարավ-արևելյան Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում են և երբեք դուրս չեն գալիս հյուսիսային 60° լայնությունից (Коллаковский, 1982):

Այն պատկանում է Դրախտավարդազգիների (*Hydrangeaceae*) ընտանիքին: Գրական տարբեր աղբյուրների համաձայն ընդգրկում է 50-70 տեսակի տերևաթափ և կիսատերևաթափ թփեր: Համաշխարհային գենոֆոնդը կազմող տեսակների մեծամասնությունը հանդիպում է Հյուսիսային Ամերիկայում (40), այնուհետև Չինաստանում (22): Անհամեմատ արքառ է չեռավոր Արևելքը (3), Եվրոպան (2), Կենտրոնական Ամերիկան (2), Ճապոնիան (2), Հիմալայները (2) և Կովկասը (1) (Աղյուսակ 1) (Флора СССР, 1939; Rehder, 1949; Hu, 1954-1956; Деревья и кустарники СССР, 1954; Дендрофлора кавказа, 1963; Воробьев, 1968; Аннотированный каталог, 1985; Гроздова и др., 1986; Бульгин, Ярмишко, 2000; Flora of China, 2001; Коропачинский, Востовская, 2002; Hufford, 2004; Shaw, 2008; Weakley, 2012; 2017; Flora of North America, 2016) (Վարդանյան, Գրիգորյան, 2021): Հայաստանում բնականորեն աճում է միայն կովկասյան սրնգենին (*Ph. caucasicus* Koehne): Հանդիպում է հյուսիս-արևելյան շրջաններում կաղնու, հաճարենու, բոխու անտառային գոտիներում և թփուտներում (Флора СССР, 1939; Мулкиджанян, 1969; Գրիգորյան, 1979; Հարությունյան, Հարությունյան, 1986; Варданян, 2003; ՀՀ Կարմիր գիրք, 2010):

ՓԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ուսումնասիրություններն իրականացվել են 2020-2024թթ. Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի՝ Երևանի, Մևանի, Վանաձորի բուսաբանական այգիների բաժանմունքներում և Իջևանի դենդրոպարկում: Տեղաբնիկ տեսակի ուսումնասիրություններն իրականացվել են Հայաստանի հյուսիս-արևելյան անտառներում:

Philadelphus ցեղի առկա դենդրոկազմը ճշտելու նպատակով Հայաստանի բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում իրականացվել է տեսակային կազմի գիտական գույքագրում ստացիոնար և կիսաստացիոնար երթուղային մեթոդով: Արդյունքում հստակեցվել և ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել նշված օջախներում առկա 15 տարսններ (*Philadelphus caucasicus* Koehne, *Ph. coronarius* L., *Ph. coronarius* f. fl. pl. hort., *Ph. gordonianus* Lindl., *Ph. latifolius* Schrad., *Ph. lewisii* Pursh., *Ph. ×magnificus* Koehne, *Ph. pekinensis* Rupr., *Ph. schrenkii* Rupr. et Maxim, *Ph. schrenkii* var.

Jackii. Koehne, *Ph. sericanthus* Koehne, *Ph. tenuifolius* Rupr et Maxim, *Ph. tomentosus* Wall. ex G. Don, *Ph. ×virginalis* Rehd., *Ph. ×zeyheri* Schrad.): Տեսակների տարստումիական պատկանելիությունը որոշելու համար կիրառվել են համեմատական, համեմատական-մորֆոլոգիական և կարգաբանական մեթոդները: Օգտվել ենք հետևյալ գրական աղբյուրներից՝ «Флора СССР» (1939); «Manual of cultivated trees and shrubs» (1949); «Деревья и кустарники СССР» (1954); «Дендрофлора Кавказа» (1963); «Дикарастущие деревья и кустарники Дальнего Востока» (1968); «Flora of China» (2001); «Flora of North America» (2016); «Flora of Missouri» (2013): Սրնգենիների վերարտադրողական առանձնատեսակությունները բացահայտելու նպատակով կատարվել է սերմերով և կտրոններով բազմացում: Կիրառվել են ներմուծման փորձերում սովանդական դարձած մեթոդներ (Дерев. и куст. СССР, 1954; Некрасов, 1973):

Սրնգենիների էկոլոգիական հարմարողականության աստիճանը տեղական կլիմայական պայմաններին որոշելու համար կատարվել է ամբողջ տեսականու վարքագծի ու ուսումնասիրություն:

Իրականացվել են ֆենոլոգիական դիտումներ (2021-2023թթ) ներմուծման աշխատանքների համար առաջարկված մեթոդական ուղեցույցներով (Лапин, 1967; Огородников, 1974; Александрова и др., 1975; Елагин, Лабинов, 1979; Зайцев 1981; Арутюнян, 1973; Арутюнян, Саядян 1976; Некрасов 1980; Плотникова, 1988; Варданян, 2012; Варданян и др., 2021): Դարգվել են պարբերական երևույթների զարգացման օրինաչափությունները և որոշվել է դրանց կախվածությունը շրջակա միջավայրի պայմաններից: Դիտարկվել է նաև կլիմայի ազդեցությունը դրանց կյանքի պարբերական երևույթների վրա:

Գնահատվել է տեսակների զեղազարդությունը, հարմարողականությունն ու հեռանկարայնությունը: Գնահատման բալային սանդղակը մեր կողմից ներկայացվել է անման կարգով՝ ամենալավ ցուցանիշ համարվել է 5 բալլ: Ելնելով *Philadelphus* ցեղի առանձնատեսակություններից ուսումնասիրվող տեսակների ընդհանուր զեղազարդության գնահատման համար առավելությունը տրվել է թիվերի արտաքին տեսքին՝ հարիթուսին, ծաղկման առատությանն ու բուրյունավետությանը: Հարիթուսի գնահատման համար հիմք են հանդիսացել Մ.Ս. Տարանի և Ի.Ս. Կոզանովայի առաջարկած սկզբունքները (Таран, Колганова, 2013): Ծաղկման առատությունը գնահատվել է ըստ Լ.Վ. Հարությունյանի (Арутюнян, 1970a, 1977): Բուրյունավետության ինտենսիվությունն ու ուժը գնահատվել է Ռ.Իս. Ռայթի սանդղակով (Райт, 1966): Հարմարողականությունը մեր տարածաշրջանի համար որոշվել է ձմեռադիմացկունության, չորադիմացկունության, վնասատուների և հիվանդությունների դեմ կայունության, վերարտադրողականության գնահատման միջոցով՝ մի շարք հեղինակների (Лапин, Сиднева, 1973; Козловский и др., 2000; Таран, Колганова, 2013) բալային սանդղակների մշակված տարբերակներով: Հեռանկարայնության աստիճանը որոշվել է հարմարողականության (K_A) գործակցով՝ $K_A = \frac{S \cdot 100\%}{s}$ ըստ Ա.Յա. Օգորովիկովի (Огородников, 1993): Գործակցի մեծությունից կախված՝ սրնգենիներն առանձնացվել են հեռանկարայնության 5 խմբերում: Վերջնարյուններն ամփոփվել են և հեռանկարային տեսականին համապատասխանաբար առաջարկվել է << կանաչապատման բնագավառում տարբեր ֆունկցիոնալ նշանակությամբ կանաչ սնկարկներում լայնորեն կիրառելու նպատակով: Առաջարկները մշակելիս օգտվել ենք Լ.Վ. Հարությունյանի (Арутюнян, 1961b, 1967), Վ.Հ. Ղազարյանի և ուր. (Казарян и др., 1974), Ժ.Հ. Վարդանյանի (Варданян, 2012, 2017; 2020; Варданян и др. 2016) համապատասխան աշխատանքներից:

Մեր կողմից ուսումնասիրվել է նաև կովկասյան սրնգենու (*Philadelphus caucasicus*) հազվագյուտության կարգավիճակը Հայաստանի ֆլորայում: Վերլուծվել են մի շարք բուսաբանների կողմից տրված մեկնարանություններն ու ուսումնասիրվել է ռեզիկտայնությունը բնորոշող հատկանիշների չափորոշիչները, հնէարուսաբանական սվյակներով բացահայտել է ծագումնաբանությունը, դիտարկվել են նրա

սպաստարաններում պահպանվելու հնարավորությունները, միգրացիայի ենթարկվելու հնարավոր ուղղությունները (Гроссгейм, 1928a, 1928b, 1936; Мулкиджанян 1967, 1969, 1975; Գրիգորյան, 1979; Հարությունյան, Հարությունյան, 1986; Варданын, 2003, 2005; Варданын, Хачикян 2012; ՀՀ բույսերի կարմիր գիրք, 2010, Файзули, Александян, 2016): Բնության մեջ տեսակի հայտնաբերման և նոր տեղեկություններ ստանալու նպատակով 2022-2024թթ Տավուշի մարզի հյուսիս-արևելյան անտառներում ստացիոնար և կիսաստացիոնար էրթուղային մեթոդով իրականացվել են որոնման մոնիթորինգային բնույթի հետազոտություններ:

ԳԼՈՒԽ 3. PHILADELPHUS L. ՅԵՂԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ԴԵՆԴՐՈՊԱՐԿԵՐԻ ՀՎԱԶՔԾՈՒՆԵՐՈՒՄ

Իրականացված բազմամյա ներմուծման արդյունքների տվյալները ծառաբույսերի ինտրոդուկցիայի ոլորտում փաստում են, որ Հայաստանում օտարածին արնզենիների ուղղությամբ առաջին աշխատանքները սկսվել են դեռևս 1940-ական թվականներից և անմիջականորեն կապված են եղել Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիների, ինչպես նաև ապրբեր դենդրոպարկերի գործունեության հետ (Ярошенко, Григорян, 1948; Ярошенко, Навасардян, Григорян, 1951; Ярошенко, Григорян, Лавчян, 1953; Махатадзе, 1948; Махатадзе, Чубарян, Азарян, 1963; Азарян, 1966, 1970; Лавчян, 1985): Ներմուծման նշված օջախներում ընդհանուր առմամբ փորձարկվել են արնզենու մոտ 40 տարատեսակ (Аннотированный каталог, 1985):

Աղյուսակ 1

***Philadelphus* L. ցեղի հիմնական ներկայացուցիչների աշխարհագրական տարածվածությունն ու պահպանված տեսակների ներկայացվածությունը ՀՀ բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում**

Տարրեր	Բնական տարածման արեալը	Առկայությունը			
		ՀՀ բուսաբ. այգիներում			Բշկանի դենդրոպարկ
		Երևան	Ման	Վանաձոր	
<i>Ph. caucasicus</i>	Կովկաս	+	+	-	+
<i>Ph. coronarius</i>	Եվրոպա	+	+	-	-
<i>Ph. coronarius</i> f.fl.pl.	Մշակության մեջ	+	-	-	-
<i>Ph. gordonianus</i>	Հյուսիսային Ամերիկա	+	-	-	-
<i>Ph. latifolius</i>	Հյուսիսային Ամերիկա	+	-	-	-
<i>Ph. lewisii</i>	Հյուսիսային Ամերիկա	+	-	-	-
<i>Ph. × magnificus</i>	հիբրիդ	+	-	-	-
<i>Ph. pekinensis</i>	Արևելյան Ասիա	+	-	-	-
<i>Ph. schrenkii</i>	Արևել. Ասիա, Հեռ. Արևելք	+	-	-	-
<i>Ph. schrenkii</i> var. <i>jackii</i>	Արևելյան Ասիա	+	-	-	-
<i>Ph. sericanthus</i>	Արևելյան Ասիա	-	-	+	-
<i>Ph. tenuifolius</i>	Արևել. Ասիա, Արևելք	+	-	-	-
<i>Ph. tomentosus</i>	Հիմալայներ	-	+	-	-
<i>Ph. × virginialis</i>	հիբրիդ	+	-	-	-
<i>Ph. × zeyheri</i>	հիբրիդ	+	-	-	-


« քուսարանական այգիների և Իջևանի դենդրոպարկի 2021-2024թթ *Philadelphus* ցեղի դեղորկազմի գիտական գույքագրման վերջնարդյունքներով մեր կողմից հայտնաբերվել են այդ ցեղին պատկանող 15 տաքսոններ (Աղյուսակ 1): Նախկինում ներմուծված 40 տաքսոններից ըստ նախնական տվյալների պահպանվել են 14-ը, որոնցից 12-ը՝ բացառությամբ *Ph. sericanthus* և *Ph. tomentosus* տեսակների առկա են Երևանի քուսարանական այգու կողեցիայում: Վանաձորում առկա է միայն *Ph. sericanthus*, Սևանում՝ *Ph. caucasicus*, *Ph. coronarius*, *Ph. tomentosus*, Իջևանում՝ *Ph. caucasicus* տեսակները: Հավաքածուն համարվել է մեկ՝ նախկինում չիշատակված *Ph. schrenkii* var. *jackii* այլատեսակով, որը հաջողությամբ աճում է Երևանի քուսարանական այգու (Աղյուսակ 1) (Գրիգորյան ԱՆ., 2022):

ԳԼՈՒԽ 4. ԿՈՎԿԱՑՅԱՆ ՍՐԵԳԵՆԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՐԻԳԵՆ ԴԵՆԴՐՈՃԼՈՐԱՅԻ ՌԵԼԻԿՏ

Որպես ռելիկտային տեսակ մեր կողմից ուսումնասիրվել է կովկասյան սնգենին (*Philadelphus caucasicus* Koehne), որը Հայաստանի ֆլորայում հանդես է գալիս որպես ռելիկտային օջախներում աճող մեզոթերմոֆիլ ռելիկտ (Мулкиджанян, 1967): Բնության մեջ տեսակի հայտնաբերման, ներկայիս կարգավիճակը հասկանալու, անհետացման ռիսկն ուղղակի կամ անուղղակի գնահատելու համար, 2022-2024թթ. մեր կողմից իրականացվել են որոնման բնույթի մոնիթորինգային աշխատանքներ: Ուսումնասիրվել են Տավուշի մարզի Աղստև և Հախում գետերի ջրհավաք ավազանները, Իջևանից դեպի Բերդ տանող ուղիղ և շրջանցող ճանապարհով ձգվող անտառային գոտու 1000-1800մ բարձրությունները: Մանրամասն ուսումնասիրվել է միջին անտառային գոտին սկսած Գանձաքարի շրջակայքից՝ ծ.մ. բարձր 930 մետրից (GPS 40°52'2.50"N, 45° 9'58.57"E) մինչև լեռնացքը՝ ծ.մ. 1800 մետր բարձրության վրա (GPS 40°52'1.02"N, 45°13'21.86"E), այնուհետև լեռնացքից Իծաքարգյուղի շրջակայքը, մինչև ծ.մ. 1390 մետր բարձրությունը (GPS 40°52'13,21"N, 45°18'13.72"E), ինչպես նաև այս երթուղուց դեպի անտառի ու անտառեզրերի մի շարք ուղղությունները:

Որոնման ընթացքում Յա.Բ. Մուլկիջանյանի (Мулкиджанян, 1967) կողմից նշված ռելիկտային օջախում մեր կողմից նկատվել են՝ *Corilus colurna*, *Hedera helix*, *Periploca graeca*, *Similax excelsa*, *Staphylea pinnata*, *Tamus edulis*, *Tilia begoniifolia*, *Juglans regia* և այլ ռելիկտային տեսակներ, որոնց հետ նախկինում հանդիպել է նաև կովկասյան սրնգենին, սակայն այդ օջախում և հետագոտված մնացած տեղանքներում այն մեր կողմից չի գտնվել: Երեք տարիների որոնումների ընթացքում կովկասյան սրնգենու բազմաթիվ թփեր հայտնաբերվել են անելավայրերի հարակից մի քանի գյուղերի տնամերձ այգիներում և բնակավայրերի հասարակական տարածքներում, ինչն ապացույց էր այն հանգամանքի, որ տեսակն ամենայն հավանականությամբ բնությունից էր տեղափոխվել մշակություն:

Հնէաբուսաբանական ուսումնասիրություններից պարզվել է, որ Որոտան գետի ավազանում Մյունիքի մարզի Միսիանի Ծամբ-1 տեղավայրի վաղ պլեյստոցենյան դիատոմիտային կավերի 1.27 մն. տարի թվագրված սովաբաշերտերից հավաքված բրածո նմուշների կազմում առկա էր տերևի դրոշմ, որը Բ.Գ. Գաբրիելյանի (Габриелян, 2021) կողմից որոշվել էր որպես *Philadelphus* cf. *caucasicus* Koehne և որի ժամանակակից համարժեք տեսակը հանդիսանում է կովկասյան սրնգենին (*Philadelphus caucasicus* Koehne) (Նկար 1):



Նկար 1. 1-*Philadelphus cf. caucasicus* Koehne տերևի դրոշմը Որոտան գետի ավազանի Շամբ-1 տեղակայից

Կովկասյան սրնգենու ներկա և նախկին անէպալայրերի միջև կապը հասկանալու համար անդրադարձ է կատարվել տեսակի ծագումնաբանությանը: Դրա արդյունքում պարզվել է (Գրիգորյան, Գարրիելյան, 2024), որ կովկասյան սրնգենին ծագումով ոչ ուշ, քան վաղ չորրորդական ժամանակաշրջանից է, նախկինում անել է Պալեոտրոտանի հովտում, հետագայում վերացել է այդ տարածքից և մեր ժամանակներում հանդիպել Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում: Ամենայն հավանականությամբ տեսակը վաղ չորրորդական ժամանակաշրջանում Կովկասում ունեցել է մեկ ամբողջական արեալ, որը ձգվել է Կովխիդայից մինչև Հիրկանիկա, իսկ սառցապատումների ժամանակաշրջաններում այն կրճատվել է, պահպանվելով նշված ռեֆուգիումներում, ինչպես նաև Յա. Ի. Մուլլիջանյանի նշած (Мулкиджанян, 1967) ռեֆուգիումային փոքր կղզակներում, հետագայում այլևս չվերականգնելով իր ամբողջական արեալը:

Ռեկոլտացիայի ամենատիպիկ և լիարժեք բնորոշում տվող չափորոշիչներով (տեսակի հնագույն ծագումը, առկայությունը ռեֆուգիումներում և բրածո նմուշների գոյության ցուցանիշները և այլն) և մոնիթորինգի արդյունքներով հստակեցվել է, որ տեսակն ամենայն հավանականությամբ դեգրադացվող ռեկիկա է, որն օժտված չէ պոլիմորֆիզմի բարձր աստիճանով և ունակ չէ բնդայանելու սեփական արեալի սահմանների տիրույթները, որով ըստ Ա.Ա. Գրոսսհեյմի (Гроссгейм, 1939, 1940) առանձնանում են հարմարված ռեկիկաները:

Չնայած ՀՀ տարածքում բնության մեջ տեսակը դեռևս չի վերագտնվել, սակայն այն անհետացման սպառնալիքի տակ չէ, քանի որ շնորհիվ բարձր գեղազարդ հատկանիշների լայնորեն մշակվում է ՀՀ բուսաբանական այգիներում, դեկորատիվներում, մասամբ նաև դեկորատիվ տնկարկներում ու մասնավոր հողատարածքներում: Բացի այդ տարածված է մեր հանրապետության սահմաններից դուրս՝ հարակից շրջաններում: Աճում է Փոքր Ասիայի լայնատերև անտառներում, Նախակովկասի արևմուտքում, Վրաստանում, Անդրկովկասի հարավ արևելքում՝ ծ. մ. մինչև 1800մ բարձրություններում (Флора СССР, 1939; Прилипко, 1954; Деревья и кустарники СССР, 1954; Дендрофлора Кавказа, 1963):

ՎՈՒՄ 5.ՍՐԿԳԵՆՆԵՐԻ ԱՃՄԱՆ, ՉԱՐԳԱՅՄԱՆ ՈՒ ԲԱԶՄԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

5.1. Հայաստանի բուսաբանական այգիների և Իջևանի դենդրոպարկի դենդրոկլիմայական պայմանների բնութագիրը կապված ծառաբույսերի աճեցման հետ

Ծառաբույսերի ներմուծման գործում կարևոր է այն տարածաշրջանների կլիմայական պայմանների ուսումնասիրությունը, որտեղ դրանք կլիմայավարժեցվել են: Այս գլխում ներկայացված են Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիների և Իջևանի դենդրոպարկի կլիմայական ընդհանուր բնութագրերը: Բացի այդ, բերված են ուսումնասիրության տարիներին (2021-2023թթ) << Հիդրոտեղերևույթաբանության և մոնիթորինգի կենտրոնի կողմից արձանագրված տվյալ տարածաշրջանների կլիմայական տարրերի միջին արժեքները:

Նշված օջախներում *Philadelphus* ցեղի ներկայացուցիչների կլիմայավարժեցման վերաբերյալ դիտումները, որոնք կատարվել են պարզելու համար դրանց հարմարողականության աստիճանը տեղական կլիմայական պայմաններին, իրականացվել են օդերևույթաբանական տվյալների հետ գուգահեռ: Ստացված արդյունքները թույլ են տվել եզրակացնելու, որ Հայաստանի իր յուրահատուկ բնակլիմայական պայմաններով, որոնք տարբեր են յուրաքանչյուր տարածաշրջանում և միաված են դեպի տաքացման, միանգամայն կարող է հանդիսանալ օտարածին սրնգեկիների ներմուծման համար լավագույն օջախներից մեկը:

5.2. Բազմացման առանձնահատկությունները

Ներմուծված բույսերի կլիմայավարժեցումը, նոր աճի պայմաններին հարմարվելու բարդ և երկարատև գործընթաց է և լիարժեք է համարվում դրանց վերարտադրմամբ: Բույսերի կլիմայավարժեցման ոլորտում տեսական հետազոտությունները հիմնվում են փորձարարական տվյալների վրա՝ պարզելու բույսերի մի քանի սեղանոյների նոր պայմաններին հարմարվելու բնույթը:

Սերմերով բազմացում: Սերմերով բազմացման համար փորձարկվել են << բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում առկա 14 տեսակները: Ցանքն իրականացվել է 2022-2023 թթ. զարնակը՝ ապրիլի 1-ին և 2-րդ տասնօրյակներին սենյակային պայմաններում՝ պետրի թստերում, հողում, գետի ավազում: Սերմերի բացարձակ ծյունակության ամենաբարձր՝ մինչև 75% ցուցանիշներ 2 տարիներին էլ գրանցվել են ավազում ցանվածների մոտ, իսկ մնացած դեպքերում տեսակները դրսևորել են համեմատաբար ցածր մինչև 32% ցուցանիշներ:

Վեգետատիվ բազմացում: Ամառային կտրոններով բազմացվել են միայն Երևանի բուսաբանական այգու կոլեկցիայում առկա սրնգեևու 13 տեսակները: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ փորձարկված տեսակների մեծ մասը հաջողությամբ վերարտադրվել են ամառային կտրոններով, արմատակալման տևողությունն ընդհանուր առմամբ տատանվել է 24-41 օրերի սահմաններում, իսկ արմատակալման ցուցանիշները կազմել են միջինում 6-90% :

5.3. Սեզոնային աճի դինամիկան և զարգացման առանձնահատկությունները:

<< բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում պարբերաբար կատարվող ֆենոլոգիայի արդյունքում մեր կողմից սահմանվել են *Philadelphus* ցեղի ներկայացուցիչների սեզոնային երևույթների օրացուցային ժամկետները, վերլուծվել են օրինաչափությունները և տեղի ունեցող շեղումները: Այս բնույթի ուսումնասիրությունների արդյունքում որոշվել է դրանց էկոլոգիական հարմարողականության աստիճանը տեղական կլիմայական պայմաններին (Գրիգորյան, Գառքյան, 2025): Տվյալներն ամփոփվել են ֆենոսպեկտորներ 1, 2-ում և աղյուսակ 3-ում, որտեղից էլ պարզ է դարձել, որ ֆենոփուլերի ժամկետները սրնգեևու ուսումնասիրված ներկայացուցիչների մոտ ուղղակիորեն պայմանավորված են տվյալ աշխարհագրական վայրի կլիմայական պայմաններով:


Մեզոնային զարգացման փուլերի շեղումները մինևայն շրջանների համար (նայն տեսակների մոտ) տատանվել են 1-15 օր, իսկ տարբեր շրջանների համար՝ մինչև 30 օրվա սահմաններում: Վեգետացիայի տևողությունն ուսումնասիրված տեսակների մոտ տատանվել է 200-240 օրերի, ծաղկման տևողությունը՝ 14-28 օրերի սահմաններում: Ծաղկման սկիզբը տեսակների մոտ արձանագրվել է Երևանում՝ մայիսի 3-րդից հունիսի 2-րդ, Վանաձորում և Իջևանում՝ հունիսի 1-ին, Մևանում՝ հունիսի 3-րդից հուլիսի 1-ին սասնօրյակներում: Ուսումնասիրված արեգեններն րնդգրկվել են միջին 20-40 օր տևողությամբ ծաղկողների խմբում (Հարությունյան, 1977):

Ֆենոսպեկտոր 1

Ներմուծված արեգենների ֆենոսպեկտորը Երևանի բուսաբանական այգում

Տեսակ տարի	ամիսներևտասնօրյակներ																																
	III			IV			V			VI			VII			VIII			IX			X			XI								
<i>Ph.caucasicus</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.coronarius</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.coronarius</i> f. fl. pl	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.gordonianus</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.latifolius</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.lewisii</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.× magnificus</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.pekinensis</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.schrenkii</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.schrenkii</i> var. <i>jackii</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.tenuifolius</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.virginialis</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	
<i>Ph.× zeyheri</i>	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
2021																																	
2022																																	
2023																																	

Ներմուծված արևգեղձիների ֆենոսպեկտրը ՀՀ Վանաձորի, Մևանի բուսաբանական այգիներում և Իջևանի դեղորայքարկում



- բողբոջների ուռչում
- տերևակալում
- ծաղկում
- սերմակալում
- տերևների աչնամային զուլավորում

Philadelphus ցեղի ներմուծված տեսակների սեզոնային 2021-2023թթ. զարգացման փուլերը

Տեսակ	Տարի	Բողբոջների ուռչում	Տերևակալում	Ծաղկման սկիզբ	Ծաղկման ավարտ	Սերմերի հասունացում	Տերևաթափ
Երևանի բուսաբանական այգի							
<i>Ph. caucasicus</i>	2021	14.04	05.05	08.06	27.06	11.09	1511
	2022	09.04	28.04	06.06	26.06	10.09	18.11
	2023	03.04	05.05	04.06	22.06	05.09	21.11
<i>Ph. coronarius</i>	2021	08.04	10.05	03.06	24.06	15.09	05.11
	2022	02.04	03.05	02.06	19.06	11.09	16.11
	2023	24.03	05.05	26.05	17.06	13.09	10.11
<i>Ph. coronarius</i> f. fl. pl.	2021	25.03	18.05	05.06	26.06	10.09	07.11
	2022	11.04	5.05	02.06	30.06	12.09	11.11
	2023	20.03	13.04	03.06	24.06	16.09	19.11
<i>Ph. gordontanus</i>	2021	18.04	09.05	12.06	02.07	30.09	20.11
	2022	10.04	03.05	08.06	28.06	01.10	24.11
	2023	16.04	02.05	09.06	30.06	03.10	25.11
<i>Ph. latifolius</i>	2021	14.04	02.05	05.06	26.06	13.10	28.11
	2022	10.04	08.05	02.06	26.06	05.10	15.11
	2023	02.04	27.04	28.05	16.06	09.10	20.11
<i>Ph. lewisii</i>	2021	15.04	12.05	07.06	27.06	15.10	20.11
	2022	12.04	05.05	06.06	25.06	12.10	22.11
	2023	23.03	02.05	05.06	27.06	10.10	30.11
<i>Ph. x magnificus</i>	2021	06.04	02.05	7.06	30.06	15.10	13.11
	2022	15.04	05.05	8.06	28.06	12.10	29.11
	2023	25.03	24.04	11.06	26.06	10.10	20.11
<i>Ph. pekinensis</i>	2021	14.04	07.05	29.05	12.06	11.09	02.11
	2022	10.04	01.05	26.05	15.06	04.09	03.11
	2023	28.03	20.04	20.05	08.06	-	15.11
<i>Ph. schrenkii</i>	2021	11.04	03.05	03.06	26.06	05.10	06.11
	2022	28.03	22.04	29.05	15.06	03.10	03.11
	2023	25.03	08.05	27.05	12.06	05.10	06.11

<i>Ph. schrenkii</i> var. <i>jackii</i>	2021	10.04	10.05	04.06	26.06	16.09	03.11
	2022	08.04	04.05	04.06	20.06	12.09	08.11
	2023	30.03	02.05	06.06	29.06	10.09	15.11
<i>Ph. tenuifolius</i>	2021	12.04	02.05	10.06	25.06	10.09	07.11
	2022	10.04	05.05	11.06	29.06	-	21.11
<i>Ph. x virginalis</i>	2021	17.04	08.05	11.06	30.06	20.09	25.10
	2022	10.04	03.05	08.06	29.06	12.09	02.11
<i>Ph. x zeyheri</i>	2021	15.04	20.05	13.06	28.06	18.09	29.10
	2022	15.04	09.05	04.06	24.06	13.09	09.11
	2022	10.04	04.05	07.06	27.06	03.10	15.11
	2023	05.04	02.05	02.06	23.06	01.10	15.11
Սևանի բուսաբանական այգի							
<i>Ph. caucasicus</i>	2021	24.04	07.06	03.07	22.07	12.10	02.11
	2022	22.04	10.06	26.06	18.07	15.10	08.11
	2023	18.04	02.06	09.07	03.08	16.10	02.11
<i>Ph. coronarius</i>	2021	22.04	02.06	20.06	10.07	-	02.11
	2022	17.04	04.06	16.06	06.07	-	10.11
	2023	16.04	25.05	23.06	14.07	-	06.11
<i>Ph. tomentosus</i>	2021	27.04	01.06	03.07	23.07	-	30.10
	2022	23.04	04.06	02.07	20.07	-	03.11
	2023	19.04	26.05	06.07	28.07	-	05.11
Վանաձորի բուսաբանական այգի							
<i>Ph. sericanthus</i>	2021	21.04	24.05	07.06	28.06	10.10	05.11
	2022	08.04	15.05	06.06	23.06	09.10	11.11
	2023	15.04	11.05	04.06	24.06	12.10	15.11
Եջևանի դենդրոպարկ							
<i>Ph. caucasicus</i>	2021	12.04	11.05	06.06	25.06	22.09	05.11
	2022	10.04	03.05	04.06	24.06	10.09	12.11
	2023	06.04	30.04	01.06	23.06	15.09	10.11

Ըստ անի ռիթմի, տեսականին մեր կողմից խմբավորվել է՝ **ՎՈ** - վեգետացիայի վաղ սկիզբ և ուշ ավարտ (մարտի 3-րդից մինչև նոյեմբերի 2-3-րդ տասնօրյակները) (*Ph. caucasicus*, *Ph. coronarius*, *Ph. coronarius* f. fl.pl, *Ph. latifolius*, *Ph. lewisii*, *Ph. × magnificus*, *Ph. pekinensis*, *Ph. schrenkii*, *Ph. schrenkii* var. *jackii*, *Ph. × zeyheri* - Երևանի բուսաբ. այգի, *Ph. caucasicus* - Իջևանի դենդրոպարկ, *Ph. sericanthus* - Վանաձորի բուսաբ. այգի); **ՎՄ** - վեգետացիայի վաղ սկիզբ և միջին ավարտ (մարտի 3-րդ տասնօրյակից մինչև նոյեմբեր) (*Ph. pekinensis* - Երևանի բուսաբ. այգի); **ՈՄ** - վեգետացիայի ուշ սկիզբ և միջին ավարտ (ապրիլի 2-րդից մինչև նոյեմբերի 1-2-րդ տասնօրյակները) (*Ph. tenuifolius*, *Ph. × virginalis* - Երևանի բուսաբ. այգի, *Ph. caucasicus*, *Ph. coronarius*, *Ph. tomentosus* - Սևանի բուսաբանական այգի); **ՈՈՈ** - վեգետացիայի ուշ սկիզբ և ուշ ավարտ (ապրիլի 3-րդ տասնօրյակից մինչև դեկտեմբեր) (*Ph. gordonianus* - Երևանի բուսաբ. այգի) ունեցողների խմբերում: Ընդ որում մեծամասնության մոտ վեգետացիան սկսվել և ավարտվել է վաղ և ուշ ժամկետում:

Սրնգենիների մեծամասնությունը, բացառությամբ 4-ի (Երևանում աճող՝ *Ph. pekinensis*, *Ph. tenuifolius* և Սևանում աճող՝ *Ph. coronarius*, *Ph. tomentosus* տեսակների) առանձնացել են հստակ արտահայտված իրար հաջորդող ֆենոփուլերի համապատասխանությամբ: Դրանք աչքի են ընկել ընձյուղների ինտենսիվ աճով, դրանց լավ հատունացմամբ, միանվազ ծաղկմամբ, զարգացման փուլերի խիստ հաջորդականությամբ, օղերն ու թարանական պայմանների նկատմամբ թույլ արձագանքով: 4 տեսակների ֆենոփուլերի անհամապատասխանությունը դրսևորվել է միայն պտղակալման և սերմակալման պարբերականությամբ կամ սերմակալման բացակայությամբ:

5.4. Գեղագարդության դրսևորման բնույթն ու գնահատականը: Էկոլոգիական հարմարողականության առանձնահատկությունները և օգտագործման հեռանկարները

Իրականացվել են համալիր ուսումնասիրություններ *Philadelphus* L. ցեղի տեսակների և պարսիզային ձևերի՝ արժեքավոր և գեղագարդ հատկանիշների բացահայտման, էկոլոգիական հարմարողականության գնահատման և տարբեր շրջանների գեղագարդ այգեգործության մեջ օգտագործելու համար առավել հեռանկարային ձևերի հայտնաբերման ուղղությամբ:

Ելնելով *Philadelphus* ցեղի առանձնահատկություններից ուսումնասիրվող տեսակների գեղագարդության գնահատման համար առավելությունը արվել է թփերի արտաքին տեսքին հարիչումսին, ծաղկման առատությանն ու բույումնավետությանը (Աղյուսակ 4):

Ph. caucasicus, *Ph. coronarius*, *ph. latifolius*, *Ph. lewisii*, *Ph. tomentosus*, *Ph. zeyheri* տեսակները բնորոշվել են խիստ փայլթամ և առողջ սաղալիքով, խիտ, առանց վնասվածքների, ամբողջությամբ տերևապատված բնով և լավ ձևավորված պսակով: Դրանց արտաքին տեսքը լիովին համապատասխանել է բնական արեալներում աճող նույն տեսակներին (5 բալ): *Ph. coronarius* f. fl. pl., *Ph. gordonianus*, *Ph × magnificus*, *Ph. pekinensis*, *Ph. schrenkii*, *ph. schrenkii* var. *jackii*, *ph. sericanthus*, *Ph. × virginialis* տեսակների սաղալիքը բնութագրվել է փոքր ինչ նվազ (մոտ 10% կրճատված տերևադասավորությամբ) փայլթամությամբ, վնասված նյութերի և չորացած տերևների բաժինը՝ կազմել է մինչև 10%: Բույսերի ընդհանուր արտաքին տեսքն ու ձևը գրեթե անփոփոխ են մնացել: Դրանք աչքի են ընկել գեղագարդությամբ և համաչափ թփային հարիչումսով: Միջին փայլթամությամբ և ոչ խիտ (մոտ 30% կրճատված) տերևադասավորությամբ, արտաքին տեսքի որոշ անհամաչափություններով առանձնացել է միայն *Ph. tenuifolius* տեսակը (3 բալ) (Աղյուսակ 4):

Տեսակների մեծամասնությունը ընդգրկվել են շատ առատ և առատ ծաղկողների խմբում, երբ ծաղիկներով պատված է սաղալիքի 75-100% (5 բալ - *Ph. caucasicus*, *Ph. coronarius*, *Ph. coronarius* f. fl. pl., *Ph. latifolius*, *Ph. lewisii*, *Ph. pekinensis*, *Ph. tomentosus*, *Ph. × virginialis*, *Ph. × zeyheri*) կամ 50-75%-ը (4 բալ - *Ph. × magnificus*, *Ph. schrenkii*, *Ph. schrenkii* var. *jackii*, *Ph. sericanthus*): Ծաղկման միջին առատությամբ առանձնանացել են *Ph. gordonianus* և *Ph. tenuifolius* տեսակները, որոնց մոտ ծաղիկներով պատված է սաղալիքի կեսից ոչ ավելին (3 բալ) (Աղյուսակ 4):

Մրնգենիները հիմնականում անուշաբույր են: Ունենալով ուժեղ բուրմուխ *Amorrr* դասակարգման համակարգում՝ ըստ բույումնավետության բնույթի խմբավորվել են եղերային բույր արձակողների խմբում, որը պայմանավորված է թռչող եղերային նյութերով (Камалаян, 1997): Չավալիոր բույրով առանձնացել են *Ph. gordonianus*, *Ph. lewisii*, *Ph. tenuifolius* տեսակները, որոնց բույրը տարբերվել և զգացվել է 0,5 մ հեռավորությունից (3 բալ): Մնացածներն ընդգրկվել են շատ ուժեղ կամ ուժեղ բույր ունեցողների խմբում, որոնց բույրը տարբերվել և զգացվել է բույսից մինչև 3մ (4 բալ - *Ph. coronarius* f. fl. pl., *Ph × magnificus*, *Ph. schrenkii* var. *jackii*, *Ph. tomentosus*, *Ph. × zeyheri*), կամ ավելի քան 3մ (5 բալ - *Ph. caucasicus*, *Ph. coronarius*, *Ph. latifolius*, *Ph. pekinensis*, *Ph. schrenki*, *Ph. sericanthus*, *Ph. × virginialis*) հեռավորությունից (Աղյուսակ 4):

Ստացված արդյունքների հիման վրա տեսակների մեծամասնությունն ընդգրկվել են բարձր գեղազարդ և գեղազարդ խմբերում՝ առանձնանալով հստակ արտահայտված, ամբողջ ընթացքում պահպանվող կամ որոշ տարիներին հարաբերականորեն թույլ արտահայտվող, սակայն ընդհանուր առմամբ կայուն գեղազարդ հատկանիշներով: Միայն *Ph. gordonianus*, *Ph. tenuifolius* տեսակների գեղազարդ հատկանիշներն են արտահայտվել չափավոր, դրսևորվորվելով տարբեր կերպ՝ ակտիվ և պասիվ տարբեր տարիների կլիմայական պայմաններից կախված (միջին գեղազարդ):

